

2206

201

7-50

№ 27

'20 06 / 09'

№ 27

201
7-50

04 OCT 2010

ԳՐ. ՔԱՅ. ՊԵՏՐՈՎ.



ԺՈՒԺԿԱԼ


ԳԻՆԵՏՆԵՐԸ



Քարգմանեց Ռուսերէնից
ՄԵՍՐՈՊ Վ. ՍԱՔՍՈՒԴԵԱՆՑ



Հրատարակեց
Դ. ՂԱՐԱԽԱՆԵԱՆՑ



Վ.Ա.ՂԱՐՇԱՊՅԱՆ
Տպարան Մայր Աթոռոյ Սբայ Էջմիածնի

1907



Մենտիայում կա Գոտէբորգ անուն մի փոք-
րիկ քաղաք: Անցած դարի կէսից ի վեր այս
քաղաքը նշանաւոր հանդիսացաւ և յարգանքի
առարկա է դառել արբեցութեան դէմ մղած
կռի իր նորագիւտ ձևով: Ըստ առածին թէ
«Մերը մեխով կը հանեն», Գոտէբորգի ժուժ-
կալները որոշեցին կուել գինեւոցների թագաւո-
րութեան դէմ հէնց գինեւոցների միջոցով: Նրանք
նպատակ դրին ազնւացնել—եթէ կարելի է ասել—
գինեւոցներ, բթացնել նրա յոռի ազդեցութիւնը,
խել նրանից նրա կործանարար ոյժը:

—Այժմ արդէն շատ լայն և ասպնջականո-
րէն բաց են բոլորի առաջ գինեւոցն և առհա-
սարակ խմիչքի վաճառատների դռները,—ասում
էին ժուժկալութեան ջատագովները Գոտէբոր-
գում: Թոյլ մարդն անկարող է զսպելու իրան:
Խմիչքի տները պահակների նման ամէն քայլի
վրա հսկում են իրանց զոհերին: Բաւական է,
ուր մտած է կոնծել, գինեւոցն ամէն տեղ և
ամէն կողմ, հէքիաթներում յիշած ինքնահա-
ւաք սփռոցի նման, պատրաստ է իսկոյն ծառա-
յելու նրան. «Բարի եկար, խմիր ինչքան կու-
ղես»: Եւ մարդը խմում է, չափ չի իմանում:
Բանականութիւնը մթաղնում է, կորցնում է
վերջին կամքը, թունաւորում է առողջութիւնը,
գրկում է հարստութիւնից, կործանում է ընտա-
նեկան երջանկութիւնը:



Թոյլերին պէտք է հեռու պահել մօլորութիւնից։ Մանուկներին օրկրամօլութեան չվարժեցնելու համար՝ քաղցրը փականքի տակ են դնում։ Կարծէ, որ ապագային երբ մեծանան ու սիրահար դառնան կոնծելու, այն ժամանակ էլ «դառն»ից զգուշացնեն նրանց, միջոց չտան խմելու։

Անշուշտ ամենից լաւը այն կը լինէր, որ բոլորովին փակէին գինեւոտները, բայց այդ դէպքում քաղաքն ու պետական գանձարանը կը զրկէին ահագին եկամուտներից։ Այդ անկարելի էր. ժողովարկների այդպիսի առաջարկութիւնները Գոտէբորգի քաղաքային վարչութիւնը լսել անգամ չէր ուզում։ Ուստի ժողովարկութեան պաշտպանները օրօշեցին քաղաքի բոլոր գինեւոտներն իրանց իրաւասութեան ներքո առնել։ Կաղմեցին «Գոտէբորգի Խմիչքների Առևտրական Ընկերութիւն»։ Այս նորակազմ ընկերութիւնը գնեց քաղաքից խմիչքի հաստատութեանց մենաշնորհը։ Ամէն տարի քաղաքին վճարում էր մի օրօշ գումար, իսկ յետո անում էր այն, ինչ որ ինքն էր ուզում, կարգադրում էր իբրև մի լիազօր գործատէր։—Որտեղ ուզում էր՝ բացում էր գինեւոտն, որտեղ չէր ուզում՝ փակում էր։ Առաջին փորձն եղել էր 1865-ին։ Շատ աջող փորձ էր, որ աստիճանաբար լայն գործադրութիւն գտաւ ամբողջ Շւետիայում, Նորվեգիայում, մեզնում՝ Ֆինլանդիայում, տեղ տեղ և ուրիշ կողմեր,

Էականն այն է, որ «Գոտէբորգի Խմիչքների Առևտրական Ընկերութիւնը» հետամուտ է ոչ թէ դրամական շահի, այլ ժողովրդին աստիճանաբար սթափեցնելու։ Դրա համար էլ չի աշխատում որքան կարելի է դինի շատ վաճառել, «ընտելացնել» այցելուներին, այլ՝ ընդհակառակն՝ «օտարացնում» է նրանց։ Խմիչքի վաճառատներն ըստ կարելոյն հեռի են իրարից և տարեցտարի պակասում են։ Ամէն մի քայլափոխում ու անկում խայտաբղէտ ցուցանակներ չեն պսպղում անցորդներին դրաւելու համար։ Երբեմն հարկ է լինում բաւական հեռու գնալ մի բաժակ օղու կամ գինու համար, բայց ո՞վ ամէն անգամ յանձն կառնէ դրա համար թաղից թաղ փողոցներ չափել։

Գինեւոտներում ծառայողները համոզւած ժողովարկականներ են։ Ամէն մի պատահածի անխտիր և ուրախութեամբ բաց չեն թողնում իրանց «ապրանք»ը։ Բաւական է, որ այցելուն լինի ոչ ժողովալ մէկը, նրան, ինչքան էլ վճարէ, գինի չեն տալ։ 18 տարեկանից ցած ոչ ոքի ներս չեն թողնում վաճառատան շէմքից։ Յայտնի արբեցողներին, ժողովալ էլ ձևանան, կաթիլ անգամ չեն տալիս։ Խմիչքի բոլոր վաճառատներում արբեցողների լուսանկարները կան և ում լուսանկարը որ կա արբեցողների ալբոմում, թող չյուսա, որ կարող է օղի գնել։ Ինչ որ էլ վճարէ, նրան գինի չեն տալ. շատ շատ կարող է կողմնակի ճանապարհներով ձեռք բերել, բայց այդ էլ ունի իր անպատեհութիւնները։

Շինութիւններն իսկ այնպէս են յարմարեցրած, որ աւելի նախաճաշարանների են նմանում քան գինետների: Որ կողմը նայիս, կը տեսնես տեսակ տեսակ աղանդիրներ թարմ, համեղ և էփան: Ուտիլիքների վաճառքից գոյացած արդիւնքն ամբողջովին յատկացրած է ծախողների անձնական օգտին: Պարզ է, որ այդպիսով ծախողներն ամէն կերպ պիտի աշխատին յաճախորդներին ամենից շատ ճաշակելիք վաճառել: Եւ այս արւած է այն տեսակէտով, որ մարդիկ, ինչպէս փորձը ցոյց է տւած, կուշտ փորով աւելի քիչ և աւելի նւազ ախորժակով են խմում քան քաղցած փորով:

Խմիչքի բոլոր վաճառանոցներում էփան էփան ծախում են թէյ, սուրճ, կաթ, շոքոլադէ, կան նաև լրագրեր ու գրքեր: Ընթերցանութեան համար նշանակւած է մինչև գիշերուստ ժամը 10-ը, այն ինչ գինու վաճառումը թոյլատրւում է մինչև ժամը 7-ը, այն ևս լուր օրերում միայն:

Այսպիսով Գոտէբորգում 25 տարւա մէջ գինու վաճառումը կիսով չափ կրճատւեցաւ: Բայց և այնպէս քաղաքի հասոյթները շնագեցան: «Առևտրական Ընկերութիւնը» ճշտիւ վճարում է նշանակւած գումարը և դեռ իրան էլ ահագին օգուտ է մնում: Ընկերութեան անդամներին ի հարկէ մի մի փոքր շահ տրւում է, բայց ոչ աւելի քան դրած դրամագլխի հինգ տոկոսը: Եկամտի մնացորդն ամբողջովին ծախ-

սւում է քաղաքի կրթական հաստատութեանց, այն է՝ դպրոցների, գրադարանների ու ընթերցարանների վրա: Դրամական այսպիսի աջողութեան պատճառն այն է, որ օղու գինը տարեցտարի բարձրանալով՝ 20—30 տարուա մէջ բոլորովին կրկնապատկւեցաւ:

Գինեւաճառութիւնը թուլանալով կենցաղավարութեան պայմաններն էլ բարւոքւեցան, — հիւանդութիւններն ու ոճիրները առաջւանդ չմնացին: Շւետիայում քանի դեռ անծանօթ էին Գոտէբորգեան այս ձևի մաքառմանը արբեցութեան դէմ, տարեկան միջին թուով հարիւրին 26 խելագարւում էին ալկոհոլից, 37-ն էլ ծայրայեղ արբեցութիւնից անձնասպան լինում: 1865-ից յետոյ այս թւանշաններն արագաբար ընկան, իսկ 1885-ին կէսն էլ չմնաց: Եւ այսպէս ամեն աեղ, ուր գործ է դրւում ալքոհոլի դէմ մաքառելու Գոտէբորգեան եղանակը, ժողովրդի սթափման գործն էլ առաջ է տարւում անյողգողդ և արագ քայլերով: Բայց բուն յաղթանակն ու վերջնական աջողութիւնը պահանջում են այնպիսի համոզւած ու գործունեա մշակներ, որպիսին էր «Գոտէբորգի Առևտրական Ընկերութեան» հիմնադիրը, որ միևնոյն ժամանակ քաղաքի հոգեւոր հովիւն էր, — Պետրոս Վիգէլգրէն:

Պետրոս Վիգէլգրէնը ժուժկալութեան ճըշմարիտ առաքեալ էր և ժողովրդի արբեցութեան դէմ՝ մղած կռիւն համարում էր իր քառասնա-

մեա հովական գործունէութեան գլխաւոր նպատակը: Նա ասում էր:

— Ինձ միշտ այնպէս է թւում, թէ մեր այս դժբախտ, խաւար և արբող ժողովուրդը մի ծանր հիւանդ է, իսկ ես նրա կողքին կանգնած մի բժիշկ, որ կոչւած եմ նրան բժշկելու: Նրա հիւանդութեան ամենախիոքը լաւացումն անգամ ինձ ընծայում է մեծ գոհունակութիւն:

— Կը հաւատամք, — ասաց մի անգամ իր պատասխան ճառի մէջ իր ծննդեան տարեդարձը չնորհաւորողներին, — ինձ համար աւելի մեծ խընդութիւն չկա կեանքի մէջ քան տեսնել մի ամբողջ գիւղ կամ հէնց մի ընտանիք իսկ, որ ուխտում է չխմել այլևս: Իսկ երբ որ և է տեղում մի անգամ ընդ միշտ փակուում է մի գինետուն կամ առհասարակ խմիչքի վաճառատուն, այդ ամենաթանկ նւէրն է, որ կարող է լինել ինձ համար: Ուստի և առանց քաշելու, առանց ամաչելու պիտի խնդրեմ ձեզնից ու ասեմ. «Պարոններ, որքան կարող էք ուրախացրէք ինձ, շուտ շուտ բերէք ինձ այս կարգի նւէրներ»:

Այսպիսի անձնազոհ գործունէութիւն ժողովրդի փրկութեան համար՝ պատուր Պետրոս Վիդէլզըէնի մէջ մի պատահական բան չէր: Դրա աղբիւրն այն տպաւորութիւններն էին, որ նա կրել էր մանուկ հասակում և այն օրինակելի դաստիարակութիւնը, որ ստացաւ դպրոցում:

Պետրոս Վիդէլզըէնը ծնաւ 1800 թուին Շւետիայի Սպոնխուլ գիւղում: Հայրը գիւղացի

էր: Եւ փոքրիկ Պետրոսն իր ամբողջ մանկութիւնն անցկացրեց գիւղում: Այդ ժամանակները գիւղի դրութիւնը շատ ծանր էր: Ժողովուրդն աղքատ էր. յաճախ պատահում էին սովի դէպքեր: Դիւղացիք ծնում, ապրում էին ագիտութեան մէջ: Միակ ուրախութիւնը գինետանն էին գրտնում:

1808-ին սկսաւ՝ պատերազմը: Ամենուրեք հրդեհ ու աւեր: Դաշտերը ոտնակոխ էին լինում: Ժողովուրդն արօրից կտրւում, հրացանն էր վերցնում: Տուն էին վերադառնում վիրաւորւած ու խեղանդամ: Վիշտ, աղքատութիւն ու ագիտութիւն համատարած էին:

Ութամեա Պետրոսը մտածող և զգայուն տղա էր: Տեսնում էր գիւղի բոլոր խեղճութիւնները, ամէն բան լաւ ըմբռնում և իր մանկական սրտով սաստիկ ցաւում էր:

— Մայրիկ, սրա վերջը ո՞ւր պիտի գնա: Միթէ շարունակւելո՞ւ է այսպէս: Հապա թնչպէս պիտի ապրին մարդիկ, — հարցնում էր մայրին:

Մայրն հանդարտեցնում էր երախային:

— Սպասիր փոքր ինչ: Զկա դժուարութիւն՝ որ վերջ չունենա: Աստուած և բարի մարդիկ կօգնեն, դժբախտութիւնը մէջտեղից կը վերացնեն: Մարմինն երբ ուժեղ և պինդ է, կը դիմանա ամէն ցաւի: Այսպէս և ժողովուրդը: Լինում է ժամանակ, որ նա էլ տանում է իւր ցաւերը:

Յետո մայրը վերցնում էր Աստուածաշունչը,

բայ էր անում «Դատաւորաց» գիրքը և ինքը կարդում. մանուկը լսում էր, որ հնում Աստծու ընտրեալ ժողովուրդը՝ Իսրայէլն ևս՝ տառապում էր չարաչար, որ շատեր՝ բոլորովին յուսահատ կարծում էին, թէ ժողովուրդն իսպառ կորաւ. բայց Տէրը հանեց նրա միջից մի անվեհեր մարդ, որ ցրեց հայրենի երկրի երեսին պատած մռայլ մէջն ու մառախուղը:

—Տա Աստուած,—վատահուլթեամբ լի վերջացրեց հոգով ուժեղ գիւղացի մայրը,—որ մեր մէջ ևս հանդէս դա մեր էլ «Իսրայէլի դատաւորը» և ոտքի հանէ ժողովրդից կուելու խաւարի ու տգիտութեան գէմ, արեւոյթեան ու թշւառութեան դէմ: Այն ժամանակ մեր խեղճ ժողովուրդն ևս լոյս կը տեսնէ: Այն ժամանակ նրա համար ևս կը դան կարմիր օրեր: Գիշերն ինչքան էլ երկարատեւ լինի, երբեք անվերջ չի լինի:

Մանուկն ագահաբար որսում էր մայրի բերնից դուրս եկած ամէն մի բառ և յաճախ խնդրում, որ կարդա իր համար Աստուածաշնչից Դատաւորների գործերից: Նրա փոքրիկ մանկական գլխում ամէն ինչ տպաւորւում էր անշինջ կերպով և Աստծու ժողովրդեան Հին Կտակարանի առաջնորդների հոյակապ պատկերներն ստէպ ստէպ ծուփ էին գալիս այնտեղ, և ինքն ուզում էր խառնել նրանց հետ, ծծել նրանց, նրանցից մէկն էլ ինքը լինել:

Ուրիշ տղաներ խաղում, կուռում էին, իսկ

փոքրիկ Պետրոսը գնում էր դաշտ, քաշւում էր անտառը կամ տանը՝ պատուհանի առաջ՝ ժամերով նստում, մտածում էր լուռ: Պատուհանից տեսնւում էին հնձող, կիսաւեր խրճիթներ, կարիքից տանջւող, չարչարող պառաւներ, արբած գիւղացիներ, կեղտոտ, պատառոտուն շորերով սովատանջ մանուկներ: Տեսնում էր այս ամէնը և մտածում.

—Խեղճ «Իսրայէլ» Աստծու դժբախտ ժողովուրդ: Նրանի շուտով դա քո էլ աստուածառաք «Դատաւոր»ը՝ աղատելու քեզ թշնամի ոյժերից:

—Տէր Աստուած,—աղօթում էր մանուկն ամէն երեկո անկողին մտնելիս,—ինձ «դատաւոր» դարձրու, ուղարկիր ինձ իմ ժողովրդի մօտ: Ես լաւ «դատաւոր» պիտի լինիմ. ես պիտի լսեմ Քեզ. Ուրիշներին էլ պիտի սովորեցնեմ լսել Քեզ:

Ծխական քահանան ուշադրութիւն դարձրեց մանկան տժգոյն, մտախոհ և խոշոր, փայլունաչեր գէմբի վրա: Նա մի քանի անգամ տեսաւ Պետրոսի արտասւագին աղօթելն եկեղեցում և խօսեցաւ հետը: Մանուկն ապչեցրեց նրան իր հասունութեամբ և բովանդակալից, լուրջ խօսքերով:

—Սրանում մի աստուծային կայծ կա,—ասաց բարի հովիւը: Պէտք է հրահրել այդ կայծը: Մեզք է անուշադիր թողնել:

Քահանան գնաց Պետրոսի հայրի մօտ և յորդորեց, որ զաւկին տա ուսումի:

—Տղադ ապագային մեծ մարդ կը լինի։ Աստուած պարգևել է նրան տաղանդ։ Ջանա չոչնչացնել այդ տաղանդը, չթաղել հողի տակ։ Ծրագը գրուանի տակ չեն պահիլ, այլ կը դնեն աշտանակի վրա, որ լոյս տա։

Հայրը հաւանեցաւ, թէ և դրամական տեսակէտից հաշին չէր գալիս։ Տղան սկսաւ յաճախել պատտորի մօտ ուսում առնելու։ Երկու ամիս մէջ պատտորը Պետրոսին պատրաստեց գիմնադիայի համար, ուր մտաւ 1811-ին։ Գիմնադիայում Պետրոս Վիգէլգրէնը շատ լաւ էր ուսանում և շուտով գերազանցեց բոլորին։ Նրան սիրում էին թէ ընկերներն և թէ ուսուցիչները։

Պետրոսի մտածութեան առարկան գիմնադիայում ևս «Դատաւորներն էին։ Նա իւր ընկերների վրա նայում էր իբրեւ փոքրիկ «Իսրայէլացիների» վրա և աշխատում էր կազմել նրանցից մի փոքրիկ աստուածային բանակ։ Պատմում էր նրանց գիւղի, գիւղացիների վարած կեանքի մասին։ Ասում էր, որ ժողովրդի կեանքն անտանելի է, որ կարօտ է նա մի աստուածային «Դատաւորի»։ Ընկերները լսում էին Վիգէլգրէնի պատմածները բիրդիական դատաւորների մասին և այնքան հրապուրեցան, որ նոյն իսկ դատաւորախաղ էլ սարքեցին։ Մէկը դառնում էր Գէգէոն, միւսը՝ Սամփսոն, երրորդը՝ Հեթթայէ և ըն։

—Աստուածային դատաւորը պարտաւոր է Աստծու կամքի համաձայն էլ ապրել,—ասում էր

Վիգէլգրէն ընկերներին։—Նա չպէտք է ոչ ոքի վիրաւորէ։ Նրա դործն է պաշտպանել միայն։

Եւ մեր փոքրիկ «Դատաւորներ»ը իրանց կուրծքը դէմ էին տալիս պաշտպանելու բոլոր նրանց, ովքեր վիրաւորանք էին կրում ընկերական միջավայրում։ Ծննդուկի նման գնում, թառում էին վիրաւորանք հասցնողի վրա, ինչքան էլ ուժեղ, հսկա լինէր նա։

«Դատաւոր» ընկերները Պետրոս Վիգէլգրէնի անունը դրել էին Սամուէլ։

—Քո սրտի հետ Աստուած է խօսում, ինչպէս երբեմն փոքրիկ Սամուէլի հետ,—ասաց մի անգամ մի ուսուցիչ Վիգէլգրէնին, և այդ օրից էլ ընկերներն անւանեցին նրան Սամուէլ։

Այդ ուսուցիչը, որի անունն էր Սանդէլ, չափազանց սիրում էր Վիգէլգրէնին։ Նա տեսնում էր, որ այդ տղան ոչ միայն ուժեղ, ճարտար խելքի տէր էր, այլ և ունէր մաքուր, ոսկեղէն մի սիրտ, որ աւելի թանկ արժէր։

—Քո հոգին, Վիգէլգրէն,—ասում էր Սանդէլը,—լի է ամենամաքուր աստուածային ձէթով։ Դու քո լամբից զգոյշ կաց, որ ձէթդ չթափես։ Կեանքի մէջ որ կողմ նայիս, խաւար է և մթութիւն։ Մարդկանց համար շատ մեծ գին ունի այդ աստուածային ձէթի մի կաթիլն անգամ։ Տար ամբողջ ձէթդ մարդկանց։

Սանդէլը շարունակ խրախուսում էր Վիգէլգրէնին։

— Ուսիր սրգեակ իմ, ուսիր: Դիտութիւնը լաւագոյն պատրոյգն է քո լամբի համար: Մարդասիրութեան ձէթ շատ ունիս. թող ուրեմն պատրոյգն էլ լինի երկար, ամուր և թանձր:

Վիզէլգրէնն աշխատում էր մեծ խանդով. շատ կարգում էր ու աւելի շատ մտածում: Սիրում էր խորհրդածութիւններ անել միշտ իր ընկերներին հետ: Նրանց մանկական օրերի «Գատաւորաց» շփանքը ցրիւ չեկաւ: Ծիշտ է, տարեցտարի մեծացան, խաղը թողին մի կողմ, մոռացան իրանց Գեդէոն, Սամփսոն անունները, բայց չմոռացան իրանց այն ազնիւ խորհուրդները: Նրանք յաճախ և երկար այս էին մտածում. ինչպէս անեն, որ կեանքն ազնւանա հետզհետէ:

— Կեանքն հնացել է, — ասում էին մի քանիսը. — ամէն ինչ որ հնանում է, էլ բանի պէտք չի գալ, ժանդոտում, փտում է: Պէտք է խորտակել այդպիսին: Մերերը սովորել են հնին, նրանց բանը պրծել է. նրանք փտածի վրա են ափսոսում. պոկ չեն գալիս փտածից ու նեխւածից: Մենք, երիտասարդներս, ունենք աւելի նուրբ հոտառութիւն, աւելի մեծ համարձակութիւն, աւելի աշխոյժ: Եւ մեր սուրբ նպատակն է քանդել, վերցնել մէջտեղից ամէն ինչ որ հին է, նեխւած է:

— Մենք ժողովրդին կը տանենք մեր ետեւից, — ասում էին ուրիշներ: Կառաջնորդենք նրան դէպի լոյս, կստեղծենք նոր կեանք:

Իսկ Վիզէլգրէնը այսպիսի բորբոքուած գլուխներին բոցը հանդարտեցնում էր ասելով.

— Ոչ այդքան արագ և ոչ այդքան հեշտութեամբ կարելի է անել այն, ինչ որ ուզում էք անել: Կոտորելուց բան դուրս չի գալ. շինելն է բանը: Կեանք ասածդ քար կամ փայտ չէ: Կեանքը՝ մարդիկ իրանք են: Կեանքը մարդկանց գործ է, և եթէ հիւանդ կեանք է, վատ կեանք է, պատճառն այն է, որ մարդիկ իրանք հոգով հիւանդ են. իսկ մարդկանց հետ պէտք է զգոյշ վարուել: Այդտեղ պէտք է ոչ թէ պինդ թակ կամ առողջ, մոլեգին բռնուցք, այլ յընտալ, կենդանի միտք և փայլուն, ազնիւ զգացում. պէտք է ոչ թէ խորտակում, այլ բուշկութիւն: Իսկ բժշկել կարելի է միայն կարողունալով: Կարող ենք, ուզում ենք ուրիշներին տանել մեր ետեւից. դրա համար անհրաժեշտ է, որ նախ մենք ինքներս ճանաչենք ցանկալի նոր ճանապարհը: Ծանաչում ենք: Կոյրը կոյրին առաջնորդել չի կարող. երկուսը միասին կը շեղւին ճանապարհից:

— Ժողովրդի կեանքը բարելաւելու գործը մի մեծ բեռ է, — շարունակում էր Վիզէլգրէնը. — Մենք ուզում ենք մեր վրա վերցնել այդ բեռը, բարձրացնել մեր ուսերի վրա: Արդեօք պէտք եղածի չափ ուժեղ են մեր ուսերը. հարկաւոր է վարժութիւն, երկար և տոկուն նախապատրաստութիւն: Առանց ճարտարապետութիւն իմանալու դժւար է տուն շինել. ապա սրբան աւելի

դժւար է կեանք շինել՝ առանց իմանալու
կեանքի հիմնական օրէնքները և առանց կարո-
ղանալու գործի փոխարկել այդ օրէնքները:

Ընկերները լսում էին Վիգէլզրէնին և ե-
ռանդով սկսում էին ուսումնասիրել լուրջ գըր-
քեր, տաք տաք վիճաբանել իրար հետ այդ
գըրքերի մասին: Սանդէլը Վիգէլզրէնի միջոցով
ղեկավարում էր նրանց: Նա ասում էր.

— Ձեր պատանութեան շրջանն է. արդէն
եռ է դալիս ձեր երակներում. ոյժերն ելք են
որոնում: Այդ շրջանում է, որ մարդ գործում
է անողղղելի սխալներ, ջախջախելով իր ոյժն ու
եռանդը կերուխումների ու զարհուրեան մէջ:
Ձգնոյ եղէք. ճանաչեցէք ձեր հոգու դրամագլխի
արժէքը: Արդիւնաւորեցէք այդ դրամագլուխը,
մի վատնէք: Ինչ որ կորցնէք այժմ, այլ ևս
ձեռք բերել չէք կարող:

Պատանիները լսեցին սիրելի ուսուցչի բարի
խօսքերը և վճռեցին կազմակերպել մի ընկերա-
կան միութիւն փոխադարձ հոգեկան օժանդա-
կութեան համար:

— Թող մեր այս շրջանակը լինի մի տեսակ
դրամատուն, — առաջարկեց Վիգէլզրէնն ընկեր-
ներին. — ով անդամակցի մեր միութեան, նոյնն է
թէ իւր ոյժերն, իբրև հոգու դրամագլուխն,
դնէ մեր դրամատան պահպանութեան տակ:

— Մեզ չարչարում են կեանքի մութ կող-
մերն. — Ասում են նոր շրջանակի անդամները.
— Մենք, թարմ և գործօն ոյժերով կեանք մըտ-

նելու պատրաստ, ուզում ենք լոյս և մաքրու-
թիւն մտցնել կեանքի մէջ: Առ այս նախ մենք
ինքներս պէտք է մաքուր և «լուսաւոր» լինինք.
ուստի և պիտի ջանանք խորշել, հեռի մնալ այն
ամէնից, ինչ որ արժատ է բերում պատանու-
թեան, այն է՝ զեղխութիւնից, կերուխումից և
անպատշաճ ընկերակցութիւններից: Մենք, ամէն
մէկս մեզ, խօսք պէտք է տանք չխմել ոչ օղի,
ոչ գինի, — ոչ ոքի լսողութիւնը չվիրաւորել փո-
ղոցային կոպիտ խօսքերով և մեր հոգու ու
մարմնի բոլոր ոյժերը վերապահել ապագա գոր-
ծունէութեան համար յանուն աստուածային
արդարութեան և հայրենի երկրի բարօրութեան:

Սանդէլն հրճանքով շնորհաւորեց «պա-
տանութեան դրամատան» հիմնարկութիւնը: Այդ
անունը տաւ Վիգէլզրէնն իր շրջանակին:

— Լաւ է, բարեկամներս, լաւ, — ասաց Սան-
դէլ: — Համախմբուեցէք սերտ սրտով, կազմա-
կերպեցէք լաւ: Խաւարին ոյժը կանգնած է
որպէս մի թանձր պատ. պէտք է ի մի ժողով-
ւին լուսաւոր ոգիներն ևս:

Արագ սահեցան գիմնադրական տարիները:
Տղաները դարձան երիտասարդ: Գիմնադրային
յաջորդեց համալսարանը:

Սանդէլը ջերմ սիրով ճանապարհ դրաւ
բարեկամների շրջանակը:

— Ձեր առաջ բացւում են, — ասաց գի-
մնութեան տաճարի դռները, երկիւղածութեամբ
մտէք այդ տաճարը, երկիւղածութեամբ էլ աշ-

0102-9884



խատեցէք այնտեղ: Այն աստուածային կայծը որ վառւեցաւ ձեր մէջ գիմնադիպում, արծարծեցէք, հրահրեցէք, որ մի բոց դառնա համարաբանում, որպէս զի յետո՞ մաքուր, աստուածային կրակով վառւած, հոգով էլ մտնէք կեանք: Խաւարին մարդկանց խաւարին կեանքում կենդանի ջահեր եղէք աստուածային արդարութեան:

Վիզէլգրէնի համալսարանական կեանքի չորս տարիներն անցան իմացական յամառ աշխատանքով: Երիտասարդը շատ կարգաց, մտածեց, անդադար գրագրութիւն ունեցաւ իր նախկին ուսուցչի՝ Սանդէլի հետ: Սանդէլն հեռւից ուրախանում էր իր աշակերտի յառաջդիմութեան վրա և հետաքրքրւում նրանով: Ու գրում էր նրան:

— Փնօք Աստծու, էլի այն ես, ինչ որ էիր տղա ժամանակդ. էլի նոյն Սամուէլն ես մնացել, էլի մտադիւր ոգւով Աստծու ձայնին ես արձագանք տալիս . . . ճանապարհիցդ չընդլիս: Աստուած քեզ գործիք է ընտրել իւր համար: Խնայիր ոյժերդ, որպէս զի յետո՞ ուղղութեամբ ծառայես Աստծու գործին . . .

1823-ին Վիզէլգրէնն աջողութեամբ աւարտեց համալսարանը: Երիտասարդ գիտնականին հրաւիրեցին մի ազնւական պարոնի կալածք գիտական մի մեծ աշխատանքի համար: Կոմս Դը Լադարգին յանձնարարեց կարգի բերել, դասաւորել ընտանեկան կարեւոր թղթեր: Եւ այստեղ Պետրոս Վիզէլգրէնը, ժողովրդի հարազատ

դաւակը, ծնած մի խուլ, աղքատիկ գիւղում, կարողացաւ մօտից ուսումնասիրել հարուստ, ականաւոր մարդկանց կեանքը: Նա տեսաւ, որ հոյակապ պալատներում էլ տիրում է նոյն հոգեւոր խաւարը ինչ որ ծխոտած խրճիթներում: Նրան շրջապատող նոր ծանօթները նոյնպէս վատ էին ըմբռնել կեանքի ճշմարիտ իմաստը: Պետրոս Վիզէլգրէնը վերջերում սրտի ցաւով էր յիշում մի պարոնի «սրամիտ» հնարքը, որը մի անգամ նա ինքը պատմեց ճաշի ժամանակ Կոմս Դը Լադարգիի տանը Վիզէլգրէնի ներկայութեամբ:

— Ես մի կախարդական քսակ եմ հնարել անփոփոխելի բուբլով, — ասաց ծիծաղելով պարոն Լեւը: — Ինչ փող որ հանում եմ միջից, էլի վերադառնում են իրանց տեղը:

— Ի՞նչպէս թէ, — հարցրին զարմացած տանտէրերն ու սեղանակից հիւրերը:

— Շատ պարզ բան է: Մեծ ճանապարհի վրա, գրասենեակիս կողքին, կանգնել եմ մի փոքրիկ գինետուն: Հարեան գիւղերից հաւաքւած մշակները, որ օրավարձով գործում են իմ արտերում, դալիս են գրասենեակ իրանց վարձն ստանում, ապա մտնում են գինետուն, միևնոյն փողն ինձ վերադարձնում: Դիտմամբ մի քանի բուբլիանոցների վրա նշան դրի, և տեսնում եմ, որ հինդ-տասը անգամ է ինձնից հեռանում, պտոյտ անում, էլի վերադառնում են ինձ մօտ: Սրանից էլ սրամիտ հնարք: Անփոփոխելի քսակ չէ, ի՞նչ է հապա:

Բոլորն սկսան քահաճի ծիծաղել, մինչ Վիզելգրէնը քիչ մնաց լաց լինէր։ Սկսաւ մտածել։

— Աստուած իմ, Աստուած իմ, ի՞նչ կա ծիծաղելու։ Այստեղ ո՞վ է աւելի խղճալին, ո՞վ է աւելի խարխափում անլոյս խաւարում, եւ պատճառը տգիտութիւնն էլ չէ։ Միթէ ուրբեր ծիծաղում են այժմ, ինձնից պակաս ուսում ունին։ Ուրեմն ի՞նչից են զուրկ։ — Զուրկ են լոյսից, զուրկ են սիրուց ու աստուածային արդարութիւնից։

— Զէ, չէ, — ասաց ինքնիրան Պետրոս Վիզելգրէնը, ընտանեկան խճճաւած, խառնիճաղանճ թղթերի կանոնաւորումը պէտք է թողնել։ այստեղ աւելի կարեւոր բան կա անելու, պէտք է աղբու լոյս սփռել մարդկանց միջին սրտերում, բարւոքելու համար տիրող խառնակ յարաբերութիւնները միմեանց միջև։

Պետրոս Վիզելգրէնը վճռեց քահանա դառնալ և 1833-ին կարգւեցաւ պատուոր Վէստէրստոգ գիւղում։

Պետրոս Վիզելգրէնի նախորդը մեռաւ 93 տարեկան հասակում։ Նա մի ծերացած մարդ էր ամէն կողմից. ծեր էր տարիքով, ծեր էր և իւր յարաբերութեամբ դէպի իր հօտը։ Նրա բանն ու գործը ծիսակառարութիւնն էր միայն, — մկրտութիւն, պսակ, թաղում և ուրիշ ոչինչ։ Իսկ ուսուցանել ժողովրդին, բացառել նրան Գրիստոսի կենդանի խօսքը, հոգեպէս բարձրացնել հօտին, Աստծու խօսքի համաձայն մեկնել,

ցոյց տալ նրան կեանքի ներքին վսեմ իմաստը, — այսպիսի բաների մասին Պետրոս Վիզելգրէնի նախորդն, երևում է, իսկի չէր էլ մտածում. դրա համար էլ շատ անխնամ, խոպան վիճակի մէջ էր այն արար, որը հերկելու էր կոչւած երիտասարդ հովիւը։ Համայնքի մէջ սաստիկ զարգացած էր արբեցողութիւնը։ Բարբերը կոշտացել էին։ Ժողովուրդը կարգաւ գրեւ զրեթէ բնաւ չգիտէր, և գաղափար անգամ չունէր ոչ Աստծու, ոչ նրա արդարութեան և ոչ կեանքի մեծ Գրքի՝ Աստուածաշնչի մասին։

— Դժւար թէ, երիտասարդ կարգակից, կարողանաք մի բան անել Զեր հօտի համար, — ասում էին խորհրդաւոր ժպտով Վիզելգրէնի կարգակիցները, հարեան գիւղերի ժողովրդապետները, որոնց հետ խօսում, խորհրդակցում էր նա իր ծրագրերի, իր ապագա գործունէութեան մասին, և որոնց անհասկանալի էին թւում նոր պատուրի եռանդն ու այդ աստիճան ջերմ սէրը դէպի գործը։

— Այդպէս չի մնալ, — ասում էին նրանք միմեանց հետ խօսելիս Վիզելգրէնի հասցէին։ Կրակը շուտով կը հանգչի։ Վէստէրստոգի համայնքի վրա այդպէս ատամ կրճատացնողներ շատեր են եղել։

— Բոլորի պատճառը երիտասարդութիւնն է։ Կրակոտ մարդիկ, — ծիծաղում էին ծերունի պատուորները, է՛լ առաջաւ պէս պարզ կեանքով

ապրող ուր է մնացել: Տեղից վեր կացողն ուղղում է առաքելալ դառնալ:

Վիզելգրէնն հեռուից լսում էր այս կարգի խօսակցութիւններն ու երբեմն ինքն էլ անձամբ նշմարում էր ունկնդիրների տարօրինակ քրմածի՜ծաղն ու շարժումները, երբ ինքը տաք տաք ճառում էր հոգեւոր հովուութեան, քահանայի լայն, համայնաձաւալ գործունէութեան մասին ժողովրդի մէջ, բայց երբեք չէր յուզւում, չէր խռովւում:

— Իմ պարտքն է — մտածում էր նա — գործել իմ գործը, ծառայել Աստծուն, և ոչ թէ հաճոյանալ ընկերներիս կամ առհասարակ մարդկանց:

Նա սրտեռանդն պատրաստւում էր իր քարոզներին: Կամենում էր տալ միշտ իր ունկնդիրներին որքան կարելի է շատ, աւետարանական ուժեղ և խոր մտքեր, բացադրել այդ մտքերը յստակ ու պարզ լեզուով: Իր քարոզներին համար օրերով սրտնում էր նա ոչ այնքան խելքով որքան սրտով այնպիսի բառեր, որ ամենից աւելի ունկնդիրների սրտի հետ խօսէին:

— Գալիս եմ ձեզ մօտ — ասաց Վիզելգրէնն իր առաջին քարոզներից մէկում — բաց դրկով, մի խորշիք ինձնից: Ի պատասխան իմ սրտին, որը բաց եմ անում ձեր առաջ սիրով, յատկացրէք ինձ համար գոնէ մի անկիւն ձեր հոգու մէջ. գէթ մի կաթիլ ուշադրութիւն շնոր-

հեցէք իմ խօսքերին: Ես ինձնից չեմ խօսում. ես աւետաբերն եմ լոկ այն ամենամեծ ողորմութեան, որ եղած է դէպի ձեզ: Աստծու ողորմութեան աւետիսն եմ բերում ձեզ. կանչում եմ ձեզ դէպի աստուածային կեանքի երանաւէտ երկիրը:

Ժողովուրդն սկզբում սիրով չէր լսում նոր պատուրի քարոզները. խորշում էր և առում:

— Սա էլ մենակ իրան է խելօք կարծում. ժամերով ճառեր է որ դուրս է տալիս: Առաջ ժամասացութիւնն իսկոյն վերջանում էր, գնում էինք գինեւոտն. այժմ՝ բան չունիս՝ նստիր, որ քարոզ լսես: Շատ հարկաւոր է:

Տաճարում քարոզի ժամանակ ունկնդիրներն աղմկում, խուլ շշուկով իրանց տժգոհութիւնն էին յայտնում: Վիզելգրէնը չէր վերդովւում. ասում էր.

— Սրանք վատ դաստիարակւած քմապաշտ երախաների են նմանում. այսպէս չեն մնալ. մի երկու ամսից ամէն բան կանցնի: Ի զուր չէ, որ Փրկիչն իր վարդապետութիւնն անւանում էր կենդանի ջուր. կենդանի ջուրն իրա համար միշտ մի ճանապարհ կը գտնէ, հունեւր բաց կանէ:

Եւ, իրօք, այդպէս էլ եղաւ. գործն աջող կերպով առաջ էր գնում. ժողովուրդն սկսաւ լսել:

— Բայց պատուրն իսկապէս ուղիղ է ասում, — գատում էին ծխականները: Այսպէս ապրել

չի լինիլ, որ մենք ենք ապրում: Որ մտածես, կը տեսնես, որ մենք մեզ վրա նայելուց ամա-
չում ենք: Մեզ ոչ թէ խօսքով ուսուցանել է
պէտք, այլ ձխասանտրով մաքրել, մինչև ականջ-
ներս թաղւած ենք ցեխի ու անցականութեան
մէջ:

Վիզէլզրէնն այսքանով չբաւականացաւ: Նրա
համար քիչ բան էր հօտի դարձրած ուշադրու-
թիւնը տաճարում: Նա ասում էր.

—Փրկիչը չէր սպասում, որ մարդիկ իրան
դիմէին, այլ նա ինքն էր գնում մօլորւած ոչ-
խարսերի ետեւից:

Եւ Վիզէլզրէնն սկսաւ շրջել խրճիթները:
Նա գալիս, խօսակցում, հարցուփորձ է անում
տնտեսութեան վերաբերեալ գործերի մասին:
Գիւղացիներն ուրախանում են, որ պատուով
պարզ, մտերմական կերպով այցելում է իրանց:
Երբեմն պատահում էր ճաշի ժամանակ և երբէք
չէր մերժում ընդունել նրանց մի պատառ հացը:
Տան տիկիներն սպասելով, որ յարգելի հիւրը
կ'այցելէ իրանց, սկսում էին աւելի օրտեռանդ-
կերպով կարգի բերել խրճիթները: Տներում
երևում էր աւելի կարգ ու կանոն, մաքրութիւն:
Գեղջուկները շատ անգամ հանաքով ասում էին
նոյն խօսք.

—Ձեր գալով մեր տներում էլ մաքրութիւն
մտաւ. տանտիկնոջ որ մնար, կարգ ու կանոնի
երես բնաւ չէինք տեսնիլ: «Մ'չինչ,—ասում են
մեր տիկիները,—այսպէս էլ կ'ապրինք»: Կեղտը

սարի պէս դիզւում էր. տուն չէր, ախոռ էր:
Փառք Աստծու, այժմ Ձեր շնորհիւ մեր կիներն
էլ կարգ ու կանոն սովորեցան:

—Ես կը կամենայի ձեզ մօտ բերել աւելի
թանկագին մի հիւր,—պատասխանում է նրանց
Վիզէլզրէնը,—Քրիստոսին իրան, որպէս զի Դուք
բոլորդ կարգի բերեք: Ձեր տանտիկիները
խրճիթները կարգի բերին, Դուք պէտք է ձեզ
կարգի բերէք:

Գեղջուկները լսում էին: Պատուին հարց
ու փորձ էր անում, թէ ինչ են մտածում կեանքի
մասին, ինչ են հասկանում Աստծու օրէնք ասե-
լով: Գեղջուկները ոչինչ չգիտէին: Ոչ Աստծու,
ոչ Քրիստոս Փրկչի, ոչ աւետարանի մասին ոչ
ոք ոչ մի գաղափար չունէր:

Մի տան մի անգամ Վիզէլզրէնն հարցրեց.

—Սուրբ Գիրք ունի՞ք:

—Սուրբ Գիրքն ինչ բան է, մարդ է թէ
իր,—պատասխանեցին նրան:

Պատուով սոսկաց: Գեղջուկներն հասկա-
ցան, որ պատուին իրաւունք ունէր սոսկալու:
Իրանք իրանց տգիտութեան վրա ամաչեցին:
Մի քանիսն ուղղակի խնդրեցին.

—Սովորեցրէ՛ք մեզ, Տէր Հայր, սովորեցրէ՛ք:

Վիզէլզրէնն հաւաքեց փոքր ի շատէ բանի-
մաց և ողջախոհ գիւղացիների մի շրջան, և եր-
կար խօսեցաւ նրանց հետ.

—Պէտք է մի բան ասել. Ամօթ է վերջա-

պէս այսպէս մնալ: Իսկի չի երևում, որ մենք քրիստոնեա ենք:

Գեղջուկները լուռ էին: Հասկանում էին, որ իսկապէս կացութիւնը կացութիւն չէր. բայց չէին իմանում ինչ դարման մտածէին, որ չարիքը վերացւէր մէջտեղից:

— Դո՛նէ երախաների համար մտածեցէք, — շարունակեց պատտօրը: — Դուք այնպէս էք մեծացնում նրանց, որ կարծէք ընտանիքի զաւակներ չլինին, այլ փարախի հորթեր: Ոչ ուսում են առնում դպրոցում, ոչ բարի օրինակ տանը:

— Ի՞նչ ուսում, — պատասխանեցին գեղջուկները: Աղքատութիւնից աչք բաց անձն էնք: Իսկ տանը ինչ կարող ենք սովորեցնել: Մենք ինքներս ոչինչ չենք իմանում Աստծու մասին:

Պատտօրն յանձն առաւ, որ ինքը փոքրերին սովորեցնէ դպրոցում. իսկ մեծերին տօն օրերը ճաշից յետո հրաւիրում էր եկեղեցի և բացադրում աւետարանը: Կենդանի խօսքը ներգործեց: Մի քանիսը խելքի եկան: Մի երկու արեւցողներ էլ խմելուն վերջ տւին:

Բայց էլի դժուար էր կուել. արեւցող էր ամբողջ երկիրը: Վիզէլգրէնի ծուխերն ուր որ գնում էին, կամ երբ ուրիշներն էին գնում նրանց մօտ հիւր, վախճանը արեւցութիւն էր: Վէստէրտոգիները այժ չունէին դիմադրելու ընդհանուր գայթակղութեանը:

— Եզը եղջիւրից կը բռնեն, — ասաց Վիզէլգրէնը: — Միայն ծխականներիս արեւցութեան

դէմ մաքառելը բաւական չէ. պէտք է կուել ընդհանրապէս գինետների դէմ:

Վիզէլգրէնը դիմեց ամբողջ ժողովրդին. հրաւէր կարգաց երկրի ամէն կողմերը՝ անդամակցելու իր հաստատած ողջախոհութեան ընկերութեանը: Համակրանք շատ քիչ գտաւ: Աստիճանաւորները, ուսուցիչներն ու վիզէլգրէնի կարգակիցներն իրանք հաստատ չէին ողջախոհութեան մէջ: Վիզէլգրէնի գլխին ինչ յարձակումներ, ինչ ծաղրեր ասես որ չտեղացին: Երբեմն մինչև իսկ խիստ պատիժներ էին սպառնում: Վիզէլգրէնն անյողգող գնում էր իր ճանապարհը: Ամէն ամառ ճանապարհորդում էր երկրի ամէն կողմերը, ժողովներ էր գումարում, ճառեր էր արտասանում: Չմեռներն յօգւածներ էր գրում, տպել էր տալիս և հազարներով ցրում Շւետիայի ամեն կողմերը: Ժողովուրդը կարդում էր պատտօր Վիզէլգրէնի կրակոտ խօսքերը, լսում նրա անկեղծ, սրտացաւ ճառերը և կամաց կամաց բաց անում իր քնաթաթախ աչերը՝ փակած, ծանրացած դարևոր խաւարից ու երկարատև արեւցութիւնից: Ամենուրեք հիմնւում էին ողջախոհութեան ընկերութիւններ, մարդիկ հաւաքւում, շրջանակներ էին կազմում միմեանց աջակցելու նորահաստատ ողջախոհ և խելացի կեանքի համար:

Ժողովրդական այս նոր շարժումը, այն է՝ գիւղացի դասակարգի լաւագոյն մասի դարձը դէպի ողջախոհութիւն՝ գրաւեց երկրի գահա-

ժառանգ Օսկար երիտասարդ արքայազնի ուշադրութիւնը: Նա բացէ ի բաց անդամ գրեցաւ Վիգէլգրէնի հաստատած ողջախոհական ընկերութեանը:

— Իմ ցանկութիւնն է. — ասաց դահաժառանգը ողջախոհների ընկերութեան անդամ գրեած պահուն, — որ օղու և գինու այն դետերը, որ այնքան լայն յորդում են մեզանում, շուտով նւազին ու մինչև իսկ բոլորովին ցամաքին. իսկ նրանց տեղ լուսաւորութիւնն հօսի առատ ուղիներով մեր թանկագին հայրենիքի ամէն կողմերում:

Ծերունի թագաւորը քաջալերեց իր ժառանգի վարժունքը.

— Դու իմ յաջորդն ես լինելու, Շւետիայի ապագա կառավարիչը, հայրենիքի յոյժ, երկրի թարմ ոյժը: Դու ին կանգնիր ամէն բանի, ինչ որ նոր է և լուսաւոր և, Աստուծոյ օգնութեամբ, դարձնու ժողովրդի կեանքը գէպի նոր, լաւագոյն ուղին՝ աւելի մեծ աշողութեամբ քան որչափ մեզ՝ ծերերիս՝ վիճակեցաւ:

Անցաւ տասը տարի. Վիգէլգրէնն հիմնեց ողջախոհութեան հարիւրաւոր ընկերութիւններ: Անդամակցողների թիւն հասաւ հարիւր հազարների: Բոլորն էլ համոզւած մարդիկ՝ անյողդողդ մարտիկներ էին ողջախոհութեան համար: Ոչ իրանք էին խմում, ոչ ուրիշներին էին հիւրասիրում գինով. ոչ պարապում էին գինեւաճառութեամբ, ոչ էլ մինչև իսկ իրանց տներն էին վարձու տա-

լիս գինեւաճառներին: Ողջախոհականները տօներն անց էին կացնում առանց գինու, հարսանիքներն առանց խմիչքների: Որտեղ կային այսպիսի ժուժկալ, ողջախոհական ընկերութիւններ, այնտեղ բարքերն էլ փոխւում էին քիչ քիչ. ժողովուրդն էլ առաջաւ աչքով չէր նայում գինու վրա: Առաջ ողջախոհութեան անունը տալ չէր լինում, կը ծիծաղէին. այժմ ամօթ էր համարւում փողոցներում արբած դուրս գալը:

1855-ին յունւարի մէջ հազարաւոր ստորագրութիւններով մի խնդիր արեցաւ թագաւորին ամբողջ ժողովրդի կողմից. Ողջախոհներն աղերսում էին թագաւորին.

— Փրկիր օղուց: Քաջ եղիր, ոչնչացրո՛ւ այն սարսափելի օձը, որ երկիրն ամայացնում և ժողովրդին կուլ է տալիս:

Թագաւորն ուշադրութեան առաւ այս խնդիրը: Հրատարակեցաւ մի հրովարտակ, որով սահմանափակւում էր գինեգործութեան իրաւունքը: Առաջ օրէնքով Շւետիայում ամէն մի տանտիրոջ թոյլատրւում էր գինի գցել. Դրա համար էլ գիւղերում ինչքան տուն, համարեա այնքան էլ հնձան կար: Ամէնքն իրանք, իրանց օղին քաշում և հեշտութեամբ էլ արբում էին: Անկումն արդէն շատ մեծ էր. օղին առձեռն պատրաստ կար միշտ: Նոր օրէնքով գիւղական բոլոր մանր գինեգործարանները փակեցան: Մնացին միայն մեծ գործարանները:

Յուզումն սկսաւ ժողովրդի մէջ: Դիւղացիք

վրդովւեցան, որ հարուստ կալածատէրերին թոյլատրուում էր առաջւա նման գինեգործութեամբ զբաղել, իսկ իրանց՝ իբրև գեղջուկներին՝ ոչ Վիգէլգրէնը մէկ էլ շրջեցաւ ամբողջ երկիրը՝ հանդարտեցնելու ժողովրդին:

— Դուք, — ասում էր Վիգէլգրէնը գիւղից գիւղ ման գալով, — նմանում էք այն քմապաշտ, անմիտ երախաներին, որոնց ձեռից երբ մեծերն առնում են որ և է վտանգաւոր ու վնասակար խաղալիկ, սկսում են ճչել, լաց լինել, փռները խփել գետնին: Թէ չէ՝ ինչո՞ւ էք զարմանում, որ մեծ մեծ կալածներում գինեգործարանները թողած՝ ձեր բակերի հնձաններն են փակել: Կարծէք չէք հասկանում, որ գեղջուկներիդ ոչ մի վնաս չկա անտառի գայլից կամ արջից, բայց բակի ժանտաքիսից ու հարեան աղւէսից միշտ կա:

Ժողովուրդն հանդարտեցաւ, յուզմունքը դադարեցաւ և ժսւթկալութիւնն առաջ գնաց խաղաղ կերպով: Թէև ամեն տեղ դեռ բոլորովին չհրաժարեցան խմելուց, բայց գոնէ որոշ չափով փոխեցին իրանց հայեացքը արբեցութեան և արբեցողների մասին: Է՛լ առաջւա պէս չիչեր դատարկելը քաջութիւն ու տղամարդութիւն չէր համարուում: Խմիչքն այլ ևս դառել էր մի պարսաւելի բան, որից զղւում էին:

1857-ին Վիգէլգրէնին իր գիւղական համայնքից հրաւիրեցին Գոտէբորգ անուն նշանաւոր քաղաքը: Այստեղ Վիգէլգրէնն ունեցաւ շատ

բարեկամներ ու համակրողներ, որոնք խոստացան նրան ամէն կերպ աջակցել, որպէս զի իրագործէ իր նոր ծրագիրը: Վիգէլգրէնը մտածեց օղու առևտուրն առնել իր ձեռը: Սովորական օղեվաճառները իրանց մի երկու կոպէկի շահի համար ամէն միջոց գործ են դնում ժողովրդին արբեցնելու: Վիգէլգրէնն ուղեց գինեվաճառութիւնն ազատել շահագիտական տեսակէտներից: Դրա համար անհրաժեշտ էր, որ քաղաքում միակ լիազօր տէրն ինքը լինէր այդ գործում: Այդ մտադրութիւնն, ինչպէս գիտենք, աջողութեամբ պսակեցաւ և Վիգէլգրէնին նոր համայնքը՝ Գոտէբորգը՝ հանդիսացաւ հայրենիք մի նոր, ինքնուրոյն, վերին աստիճանի աջող եղանակի ժողովրդական արբեցութեան դէմ մաքառելու համար: Այդ եղանակի հայրն էր պառտոր Պետրոս Վիգէլգրէնը:

Այստեղ, Գոտէբորգում, Հ. Պետրոսը կնքեց և իր բաղձաշխատ կեանքը: Մի քաբօղիչ իր դամբանականում ասաց նրա մասին.

— Այս մարդն իր քանքարները չթաղեց հողի տակ: Իբրև առտուածային կենդանի սերմ, լի ոյժով, տուաւ հարուստ պտուղ: Ժողովրդի գաւակ, գիւղում ծնած, բարձրացաւ գիտութեան կատարը. առաւ այնտեղից ինչ որ գտաւ Դաւագոյն ու լուսաւոր, և կրկին իջաւ «ցած». իր անբախտ, խաւարին եղբայրների մօտ և ծանօթ ճանապարհով առաջնորդեց նրանց դէպի Եոյսի, դէպի Աստծու արդարութեան և քրիս-

տոնէական սիրու թագաւորութիւնը, —նշնտեղ,
ուր ինքը բուն մարդն էր: Արդէն նա մարմնով
մեկնեցաւ մեզնից, բայց հոգին մնում է մեզ
հետ, և եթէ մենք կենդանի լինինք այդ հոգով
և գնանք նրա այն աշխատութեանց շաւղով, որ
գործ դրաւ յանուն Աստծու թագաւորութեան,
վստահ եմ, որ կրկին պիտի տեսնւինք նրա
հետ, կրկին պիտի հանգիպինք իրար Երկնաւոր
Հօր օթեաններում:



123
123

ՀՀ Ազգային գրադարան



NL0254613

